



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Թոփակյան Մարիամ

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,
բակալավրիատի ուսանող
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. Ռ. Կարապետյան
Էլ. փոստ՝ mari.top.10@mail.ru

ԴՐՎԱԳՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայերը Եգիպտոսում հաստատվել են շատ վաղուց: Եգիպտոսում հաստատված առաջին հայերի մասին տեղեկությունը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարին: Եգիպտոսի երկարամյա կառավարիչ, հռոմեացի Սալլուստոս պատմիչը հայտնում է, որ Եգիպտոսում բավականին թվով հայեր էին ապրում և իշխող դիրքեր ունեին [1]:

1805 թ. Եգիպտոսի կուսակալ է նշանակվել Մուհամեդ Ալին, ում իրականացրած վարչական ու տնտեսական բարենորոգումները զգալիորեն նպաստել են երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացմանը: Մուհամեդ Ալին բարյացակամ վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ: Ինչպես նշում է պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, «միշտ սիրեց հայերը» և «քաջալերեց զանոնք», քանզի նրանք «անշահախնդիր տարր մըն» էին, «կրնային եվրոպացիներեն ավելի օգտակարապես ծառայել» [2]: Կրոնական հանդուրժողականության պայմաններում հայերը երկրի գրեթե բոլոր ոլորտներում բարձր դիրքեր են զբաղեցրել: XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայերը մեծ դեր էին խաղում Եգիպտոսի տնտեսական կյանքում՝ հաջողությամբ մրցակցելով թե՛ իրենց տեղական, թե՛ այլ փոքրամասնությունների ներկայացուցիչ գործընկերների հետ: Հայերը կարևոր պաշտոններ էին վարում Եվրոպական գործերի և եգիպտական վաճառականության դիվանում, որն արտաքին գործերի և առևտրի բարձրագույն մարմինն էր: Այդ դիվանի հաջորդական երեք նազիրներն են եղել Պողոս Յուսուֆյանը (1808-1844 թթ.), Յակուբ Արթին բեյ Չրաքյանը (1844-1850 թթ.) և Առաքել բեյ Նուբարյանը (1850-1853 թթ.): Աչքի է ընկել նաև Ստեփան բեյ Դեմիրճյանը (1855-1857 թթ. ղեկավարել է երկրի Արտաքին նախարարությունը): Պետական ղեկավար պաշտոններում գործել են նաև Խոսրով Չրաքյանը (1800-1873 թթ.), Արիստակես Ալթուն Տյուրին (1804-1858 թթ.) և այլք: Հաճախ օտարները Եգիպտոսի Արտաքին և առևտրի նախարարությունն անվանել են «Պալե Արմենիեն» և գնահատել հայ գործիչների հեղինակությունը՝ «Հայերը մուտք են գործել ամեն տեղ: ...Հայկական համայնքն ամենազորն է փոխարքայի արքունիքում» [3]:

1841 թ. անգլիական դիվանագիտությունը կարողացավ հասնել Մուհամեդ Ալիի հրաժարականին՝ արդյունքում կրճատելով Եգիպտոսի արտաքին քաղաքական և տնտեսական մի շարք իրավասություններ: 19-րդ դարի կեսին Եգիպտոսը մասամբ անցել է Մեծ Բրիտանիայի գաղութային վերահսկողության ներքո: Նուբար փաշա Նուբարյանը 1857 թ. նշանակվել է Երկաթուղու և տրանսպորտի վարչության պետ,

հետո չորս անգամ եղել է Արտաքին գործերի նախարար (1866-1874, 1875-1876, 1878-1879, 1884-1888 թթ.), ապա երեք անգամ՝ վարչապետ (1878-1879, 1884-1889, 1894-1895 թթ.): Հետագայում դարձել էր նաև Մուհամեդ Ալիի որդու՝ Իբրահիմի թարգմանիչն ու խորհրդատուն [4]: Նրա անմիջական մասնակցությամբ 1876 թ. Եգիպտոսում ստեղծվել էին Միջազգային (կամ Խառը) դատարանը և Նոթաբլների պալատը, որով վերջ էր դրվել օտար տերությունների քաղաքական միջամտությանը:

Հայերը գլխավորապես բնակվում էին Կահիրեում և Ալեքսանդրիայում: Ըստ Ա. Գարտաշյանի՝ Ալեքսանդրիայի հայկական գաղութը սաղմնավորվել է ֆրանսիացիների ներխուժման տարիներին [5]: 1891 թ.-ին Եգիպտոսի Արտաքին գործերի նախարար էր նշանակվել հայազգի Տիգրան փաշա տ'Ապրո Բագրատունին և իրականացրել է մի շարք բարեփոխումներ՝ ավատատիրության հետամնացության հաղթահարման, եգիպտական բանակի ամրապնդման քաղաքականության ուղղությամբ [2]: Եգիպտոսի հայ համայնքին հնուց ի վեր տեղական իշխանությունները ճանաչվել են իբրև հոգևոր համայնք՝ շնորհելով անհրաժեշտ արտոնություններ: Մինչև 1311 թ. եգիպտահայ եկեղեցական համայնքը գտնվել է Կիլիկիո կաթողիկոսության, 1311-1839 թթ.՝ Երուսաղեմի, 1867 թվականից՝ Կ. Պոլսի պատրիարքությունների, իսկ ահա 19-րդ դարի վերջից՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կաթողիկոսության ենթակայության ներքո:

1885 թվականից, ի պաշտպանություն Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով նախատեսված՝ Արևմտյան Հայաստանում կատարվելիք բարենորոգումների, եգիպտահայ համայնքում ծավալվում է լայն շարժում: Այս հարցում բախվում են համայնքի աշխատավոր խավերը և ունևորները: Այդ ժամանակ նորաստեղծ մի շարք ընկերություններ պահանջում էին բողոքի ձայն բարձրացնել ընդդեմ թերակատար բարենորոգումների: Այդ ընկերություններից «Հառաջադիմասերներ»-ի միությունն էր, որ սկզբում կապված էր Մ. Փորթուգալյանի «Հայաստանի զանգվածներու միության» հետ: Վերջինիս պայքարն ուժգնացել է Ալեքսանդրիայում՝ կապված «Նեղոս» շաբաթաթերթի լույսընծայման հետ: Պահպանողականների ու «Հառաջադիմասերների» պայքարը հանգեցրել էր ոստիկանության միջամտությանը: Ի վերջո, նրանց հաջողվել էր կառավարության միջոցով բանտարկել «Հառաջադիմասերների»-ի ղեկավարներին և փակել «Նեղոս» շաբաթաթերթը [6]:

Պետք է նշել, որ 20-րդ դարի սկզբից եգիպտահայ համայնքում գործող ազգային կուսակցությունների քաղաքական կողմնորոշումն արևմտյան բուրժուազիայի շահերի համապատասխան արևմտաեվրոպական էր: Վերակազմյալ Հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար ու Դաշնակցություն կուսակցությունները, պատրանքներ սնուցելով թուրքական բուրժուազիայի հռչակած ազատության և արդարության սկզբունքների նկատմամբ, ոչ թե առաջ էին քաշում Հայաստանի անկախության հարցը, այլ բավարարվում էին ընդամենը ներքին ինքնավարությամբ:

Բալկանյան պատերազմի տարիներին ակտիվանում է ներհամայնքային կյանքը: 1912 թ. նոյեմբերի 3 թվակիր նամակով «Եգիպտահայ գաղութի ներկայացուցիչները»

(Է. Աղաթոն, Տիգրան խան Քելեկյան, Վահան Մալեգյան, Առաքել Փափազյան, Լևոն Մկրտիչյան, Վահան Ջարդարյան և ուրիշներ) Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին դիմում են գրում, ապա դեկտեմբերի 13-ին Եգիպտահայերի անունից հեռագիր-դիմումներ ուղարկվում մեծ տերություններին (Ռուսաստանի ցարին, Անգլիայի ու Իտալիայի թագավորներին, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի նախագահներին): 1913թ. հունվարին Կահիրե է հասնում Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը, որով Պողոս Նուբարը նշանակվում է կաթողիկոսական պատվիրակ (հետագայում ստեղծվեց նաև Ազգային պատվիրակությունը):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Եգիպտահայ համայնքն անգնահատելի ավանդ է ունեցել հայ գաղթականներին ու կամավորներին օժանդակելու գործում: Հենց պատերազմի սկզբում Կահիրեի ու Ալեքսանդրիայի հայերը Թիֆլիս ուղարկեցին 20.000 ռուբլի, ապա Պողոս Նուբարի ջանքերով հիմնվեց «Ազգային շահերու պաշտպանության հիմնադրամը», իսկ մինչև 1915 թ. մարտի 15-ը հավաքել և էջմիածին է ուղարկվել 60.000 ռուբլի [7]: Ըստ որոշ տեղեկությունների՝ մինչև 1915 թ. իրադարձությունները 20.000 հայ էր բնակվում Եգիպտոսում և Հաբեշստանում [8]: Հայությանը օժանդակելու համար ստեղծվում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (հիմնադրվել է 1906 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում՝ ազգային գործիչ Պողոս Նուբարի և Եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչների նախաձեռնությամբ): Ստեղծվել է նաև հայկական Կարմիր խաչը (1915 թ., Ալեքսանդրիա): 1915 թ. դեկտեմբերին ֆրանսիական և անգլիական նավերը, տեսնելով Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանների «Քրիստոնյաները վտանգի մեջ են» գրությունը, օգնության եկան և տեղափոխեցին ինքնապաշտպանվող 4058 հայերին Պորտ Սաիդ, որտեղ հետագայում շատերը մտան Ֆրանսիական (հայկական) լեգեոնի կազմի մեջ:

1919-1923 թթ. Եգիպտոսում բռնկված համաժողովրդական ապստամբությունը ցնցեց բրիտանական կայսերապաշտության հիմքերը: 1919 թ.-ի հակաբրիտանական ապստամբությունն իր դրոշմը թողեց հայ-եգիպտական հարաբերությունների հետագա զարգացման վրա: Արդյունքում թալանվեցին հայերի կրպակներն ու վաճառատները. ներխուժեցին բնակարաններ, կոտորեցին որոշ թվով հայերի [7]: 1922 թ. Եգիպտոսը հռչակվեց սահմանադրական միապետություն: Մարտի 15-ին Եգիպտոսի թագավոր դարձավ Ֆուադը, իսկ մեկ տարի անց՝ 1923 թ. ապրիլի 19-ին, հրապարակվեց Եգիպտոսի սահմանադրությունը, որով ազգային փոքրամասնություններին իրավունք էր տրվել ինքնուրույն վարելու ներհամայնքային գործերը:

1920 թ. նոյեմբերին դրամահավաքության նպատակով Անդրանիկը երկու ամսով մեկնել է նաև Եգիպտոս՝ Ալեքսանդրիա, ապա Կահիրե՝ արժանանալով Եգիպտահայերի ջերմ ընդունելությանը: Այնուհետև Անդրանիկը մեկնել է Պորտ Սայիդ, ծանոթացել հայկական վրանաքաղաքի և հայ լեգեոնականների կյանքին [9]: Հայ ժողովրդի կյանքում բացառիկ իրադարձություն էր Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծումն Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի նախագահությամբ

(հիմնադրվել է 1921 թվականի սեպտեմբերին Երևանում): ՀՕԿ-ի խնդիրն էր օգնել Մայր Հայաստանի սովյալ բնակչությանը, օժանդակել շինարարությանը, սերտ կապեր հաստատել աշխարհով մեկ սփռված հայ տարագիրների հետ, նրանց համախմբել հայրենիքի շուրջը: Եգիպտոսի ՀՕԿ-ը կազմվեց 1926 թ. փետրվարի 28-ին Կահիրեում: Երկրորդ համաշխարհային պատերազմը կարևորագույն իրադարձություն էր, որը փոխեց իրերի առկա վիճակը միջազգային հարաբերություններում և ընդհանրապես աշխարհում: 1943 թ. եգիպտահայերը մասնակցեցին «Սասունցի Դավիթ» տանկային զորասյան օգտին կազմակերպված հանգանակությանը: Հասարակության բոլոր խավերը, ինչպես գրում է եգիպտահայ գրող, հրապարակախոս Գառնիկ Սվազյանը. «ավուր հացի համար պայքարող ընտանիքի հայրեր» *ինքնաբուխ կերպով մուծել են իրենց լուծան»* [10]:

Պետք է նշել, որ եգիպտահայության կյանքում բացառիկ նշանակություն ունեցավ եգիպտահայ ազգային խորհրդի ստեղծումը: Խորհուրդը կյանքի կոչվեց Կահիրեում (1945 թ. հոկտեմբերի 11, Ալ. Սարուխանի նախագահությամբ) և Ալեքսանդրիայում (1945 թ. դեկտեմբերի 12, Ս. Շահպազի նախագահությամբ, Հ. Գալընյանի, Տ. Սեֆերյանի, Համբար Դավթի, Գ. Սվազյանի և այլոց անդամակցությամբ) իրարից անջատ գործող ազգային խորհուրդների միավորմամբ, որոնց աջակցում էին Ռամկավար-ազատական ու Հնչակյան կուսակցությունները: Եգիպտահայ ազգային խորհրդի նպատակն էր.

«1) պահանջել կցումը Խ. Հայաստանի՝ Թուրքիո կողմե բռնագրավված հայկական նահանգներուն, որոնք ճշտված են Սևոի դաշնագրով ալ:

2) Ըլլալ ջարդագով ներգաղթին և անոր սատարել:

3) Մեր դատին պաշտպանությունը հանձնել անվերապահորեն Խ. Հայաստանին, որ իր կարգին կվայելէ Խորհրդ. Միության... պաշտպանությունը:

4) Մշակութային և հայրենասիրական կապեր հաստատել Մայր հայրենիքի հետ» և այլն [7]:

Եգիպտահայ ազգային խորհրդի կատարած կարևոր քայլերից էր 1946 թ. ՄԱԿ-ի նստաշրջանին ուղարկված հուշագիրը, որտեղ չորս լեզվով (հայերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն) ներկայացվում էր հայ ժողովրդի արդարացի պահանջները: Եգիպտահայ ազգային խորհուրդը գործեց մինչև 1948 թվականը, երբ բրիտանական կայսերապաշտները հալածանքներ սկսեցին ազգային-ազատագրական ուժերի դեմ: 1950-ական թվականների սկզբից եգիպտահայ համայնքը սկսել է նվազել՝ անխուսափելիորեն հանգեցնելով համայնքի ներուժի, ինչպես նաև եգիպտական հասարակության մեջ ինտեգրվածության աստիճանի նվազմանը: 1952 թվականի Հուլիսյան հեղափոխությունը, որը կազմակերպել էին Գամալ Աբդել Նասերն ու նրա կողմնակիցները, տապալում է Եգիպտոսի իշխանությունը: Գամալ Աբդել Նասերի կառավարման ժամանակ ևս բազմաթիվ հայեր լքում են Եգիպտոսը [11]:

Ինչպես Եգիպտոսի ամբողջ պատմական ընթացքի, այնպես էլ եգիպտահայերի կյանքի ու գործունեության համար շրջադարձային էին Անվար ալ-Սադատի նախա-

գահության տարիները (1970-1981 թթ.): Եգիպտահայերի՝ վերը նշված արտագաղթը քիչ թե շատ կանխվել է Սադաթի հռչակած «բաց դռների» քաղաքականությամբ: Այն հնարավորություն է տվել գործարար մարդկանց, այդ թվում՝ հայերին, ինչ-որ չափով կայունացնելու իրենց տնտեսական դրությունը: Ըստ որոշ տվյալների՝ 1974 թ. Եգիպտոսում հայերի թիվը 10 հազարից փոքր-ինչ ավելի է եղել: Սադաթի նախագահության հենց առաջին տարիներին եգիպտահայ ազգային իշխանությունները կարողացան հաջողություն արձանագրել՝ կապված ազգապատկան հողերի վերադարձի հետ, ինչը փաստում են Կահիրեի առաջնորդարանի հաղորդագրությունները [12]: Եգիպտոսի հայ համայնքի պատմական այս շրջանն ավարտվեց 1981 թ. հոկտեմբերի 6-ին, երբ Կահիրեի արվարձանում ռազմական շքերթի ժամանակ սպանվեց Եգիպտոսի նախագահ Սադաթը: Չնայած Եգիպտոսի իշխանությունների, մասնավորապես՝ Սադաթի հայանպաստ քաղաքականությանը՝ հայերը շարունակում էին արտագաղթել, ինչին նպաստեց 1970-ական թթ. վերջին և 1980-ական թթ. սկզբին պետության ներքաղաքական սրված իրավիճակը:

Եգիպտոսն արաբական աշխարհի առաջին երկրներից էր, որ ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը 1991 թվականին: ՀՀ անկախության ձեռքբերումից հետո հայ-եգիպտական հարաբերությունները թևակոխեցին որակապես նոր փուլ, ինչը բազում հնարավորություններ ընձեռեց թե՛ երկկողմ, և թե՛ բազմակողմ համագործակցության համար [13]: 1992 թ. մարտի 9-ին երկու երկրների միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: Նույն թվականի սեպտեմբերին Կահիրեում բացվել է Մերձավոր Արևելքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաջին ներկայացուցչությունը: Ինչպես իրավա-ցիորեն նշել է Պերճ Թերզյանն իր «ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը» գրքում, «Արդարեւ, ՀՀ Եգիպտոսի դեսպանատան կայացման մեջ կարեւոր դեր ունեցան Գահիրեի ազգային առաջնորդարանը, ՀԲԸՄ-ը, շոշափելի նիւթական աջակցութիւն բերող քանի մը անհատներ եւ, անոնց կողքին, եգիպտահայ համայնքին զաւակներէն շատեր, իւրաքանչիւրը ըստ իր կարելիութեան կամ բարիկամեցողութեան» [14]: Դեսպանությունը տեղակայված է Կահիրեի Չամալեք կղզի-թաղամասում, որտեղ գտնվում են նաև բազմաթիվ այլ պետությունների դեսպանություններ: 1993 թ. ապրիլից Երևանում գործում է Եգիպտոսի դեսպանությունը: 1992 թ.-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը մեկնել է Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, հանդիպումներ ունեցել քաղաքական մի շարք գործիչների հետ՝ արդյունքում 1992 թ. մարտի 9-ին կնքվելով «ՀՀ և ԵԱՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» համաձայնագիրը: Այս այցին նախորդել էր 1992 թ.-ին Եգիպտոսի փոխվարչապետ Քամալ ալ-Գանգուրի այցը Հայաստան: 1992 թ. մայիսին Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը պետական այցով մեկնել է Եգիպտոս, հանդիպել նախագահ Հոսնի Մուբարաքի, արտգործնախարար Ամրո Մուսայի, և, իհարկե, եգիպտահայ համայնքի ներկայացուցիչների հետ: Պաշտոնական այցի շրջանակներում 1992 թ. մայիսի

27-ին կնքվել է «ՀՀ և ԵԱՀ միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը: Այսպիսով, նորանկախ Հայաստանի և Եգիպտոսի միջև բուռն համագործակցություն է սկսվում քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական ոլորտներում՝ շարունակվելով նաև հետագա տարիներին:

Փաստորեն, հայ-եգիպտական միջպետական հարաբերությունների զարգացման գործում անուրանալի է եգիպտահայ համայնքի, նրա նշանավոր ներկայացուցիչների ակտիվ գործունեության, ինչպես նաև հայ-եգիպտական դարավոր բարեկամության դերը: Եգիպտահայ համայնքը ներկայումս էլ ծավալում է հայանպաստ գործունեություն՝ մտապահելով անցյալի վառ ու կարևոր դրվագները: Այսպիսով, հայկական սփյուռքի մաս կազմող յուրաքանչյուր համայնք պետք է ծավալի հայաստանակենտրոն նպատակային և կազմակերպված գործունեություն այնպես, ինչպես եգիպտահայ համայնքը: Ուստի, հայ իրականության մեջ բացառիկ նշանակություն ունեցող այս համայնքի գործունեությունն ուսանելի օրինակ է կազմակերպված հայկական համայնքի և մշակութային օջախի համար, որտեղ զարգացել և ժամանակի ընթացքում պահպանվել են հայկական ինքնության և ազգային նկարագրի բոլոր բաղադրատարրերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Մսրըլյան Գ.**, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 12:
- [2] **Ալթոյաճեան Ա.**, Արաբական Միացյալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը եւ հայերը (Սկիզբէն մինչեւ մեր օրերը), Գահիրէ, 1960, էջ 61-2, 95-7:
- [3] **Ավագյան Ք.**, Եգիպտոս, «Հայոց պատմություն», հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 2015, էջ 334:
- [4] **Robert Hunter F.**, Egypt Under the Khedives, 1805-1879: From Household Government to Modern Bureaucracy, Egypt, 1999, p. 167,
URL: <https://www.amazon.com/Egypt-Under-Khedives-Government-Bureaucracy/dp/977424544X> (Accessed: 15.04.2018).
- [5] **Գարտաշեան Ա.**, Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հատոր Բ, Վենետիկ, 1986, էջ 115:
- [6] **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ. Հայ գաղթավայրերի պատմություն, հատոր Բ, Երևան, 1967, էջ 63-4:
- [7] **Թովուզյան Հ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1975, էջ 173, 220, 270-1:
- [8] **Մելիքսեթյան Հ.**, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Երևան, 1975, էջ 110:
- [9] **Ավագյան Ք.**, Զորավար Անդրանիկ Օզանյանի գործունեությունը արտերկրում (1919-1927 թթ.), Պատմա-բանասիրական հանդես, № 2, Երևան, 2015, էջ 143-65:
- [10] **Սվազյան Գ.**, Հայրենիքիս համար, Երևան, 1965, էջ 36:

[11] **Agnieszka Dobrowolska, Jaroslaw Dobrowolski**, Heliopolis: Rebirth of the City of the Sun, Egypt, 2006, p. 1667, URL:

<https://books.google.am/books?id=g1s80vojgmEC&printsec=frontcover&dq=heliopolis+ebirth+of+the+city+of+the+sun&hl=ru&sa=X&ved=0ahUKEwjz8sym2IUAhUFxxQKHealBnsQ6AEIJTAA#v=snippet&q=armenians&f=false> (Accessed: 18.05.2018).

[12] **Խաչատրյան Ա.**, Եգիպտահայ համայնքը 1970-1981 թվականներին, Երևան, 2008, էջ 49-55:

[13] **Կարապետյան Ռ.**, Կահիրեի համալսարանում հայագիտական կենտրոնի հիմնադրման պատմությունը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3, Երևան, 2016, էջ 46,

URL: <http://raber.asj-oa.am/6598/1/45.pdf> (հղումը կատարվել է՝ 13.02.2018):

[14] **Թերզյան Պ.**, ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը», Գահիրե, 2012, էջ 12,

URL:http://egypt.mfa.am/u_files/file/Egypt/Genesis%20of%20the%20embassy%20new.pdf:

Թոփակյան Մարիամ

ԴՐՎԱԳՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
Քանալի բառեր՝ Եգիպտոսի հայ համայնք, Մուհամեդ Ալի, Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներ, Եգիպտահայ Ազգային խորհուրդ, Հուլիսյան հեղափոխություն, դիվանագիտական հարաբերություններ:

Այս հոդվածը սեղմ ակնարկ է եգիպտահայ համայնքի, նրա անցյալի և ներկայի իրողությունների, երկրում գործող համազգային կառույցների և դրանց գործունեության, Հայաստանի հետ եգիպտահայ համայնքի հարաբերությունների մասին: Եգիպտահայ համայնքը բոլոր պատմափուլերում նշանակալի հաջողությունների է հասել երկրի պետական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի տարբեր ոլորտներում՝ շնորհիվ երկրում հայերի նկատմամբ դրական վերաբերմունքի:

Топакян Мариам

ЭПИЗОДЫ ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В ЕГИПТЕ: ФОРМИРОВАНИЕ АРМЯНО-ЕГИПЕТСКИХ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ

Ключевые слова: армянская община в Египте, Мухаммед Али, Первая и Вторая Мировая война, Египетско-армянский Национальный Совет, Июльская революция, дипломатические отношения.

В данной статье представлен краткий обзор армянской общины в Египте, ее прошлых и нынешних реалий, действующих в стране общенациональных структур и их деятельности, а также отношений между Арменией и египетской общиной. Благодаря доброжелательному отношению к армянам, армянская община в Египте добилась значительных успехов в различных сферах на всех исторических этапах государственно-политической, социально-экономической и духовно-культурной жизни.

Торакян Mariam

EPISODES FROM THE HISTORY OF ARMENIAN COMMUNITY IN EGYPT: ESTABLISHMENT OF ARMENIAN-EGYPTIAN INTERSTATE RELATIONS

Key words: Armenian community of Egypt, Muhammad Ali, First and Second World Wars, Egyptian Armenian National Council, July Revolution, diplomatic relations.

This article provides a brief review on the Armenian community of Egypt, its past and present realities, pan-national structures in the country and their activities, as well as the relations between the Armenian community and Egypt. Due to the favourable attitude towards Armenians, the Armenian community in Egypt has achieved remarkable success in diverse spheres during all historical periods of state-political, social-economic and spiritual-cultural life of the country.